Ռափայել Պատկանյան

Մեծ

Գընա՛, իմ որդյակ, աշխարհքըս անցի՛ր .
Պանծալի անո՛ւն Մեծի դու ստացի՛ր:

Ու գընաց որդին, շատ քըրտինք թափեց,
Մեծ հարըստություն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով .
Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

Չէ՛, չէ՛ . թեև դու բորսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Նա գընաց մըտավ իմաստնոց տաճար,
Եղավ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով .
Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

Չէ՛, չէ՛ . թեև դու գիտությանց ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Պահով, աղոթքով մըտավ անապատ,
Քուրձ հագավ մարմնուն, հրաշքներ գործեց շատ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով .
Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

Եղեմա դրախտին էլ լինիս դու զարդ,
Ես քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գընաց որդին, դարձավ զորավար,
Խելքով, քաջությամբ տիրեց շատ աշխարհ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով .
Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

Չէ՛, չէ՛ . թեև դու զոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Ու գընաց որդին մի երկիր օտար,
Հրեշք ու ցավերե մաքրեց այն աշխարհ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով .
Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

Օտար աշխարհի թեև եղար զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Ու գընաց որդին . . . Հա՛, սարն էր գլորման . . .
Դեմ տըվեց ուսը, չը թողեց անկման . . .
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով .
Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

Դյուցազների մեջն էլ լինիս դու զարդ,
Բայց քա՛վ ինձ ասել քեզ համար մեծ մարդ:

Ու գնաց որդին գըլխակոր, տըրտում,
Հոգին վըրդոված, ցավ ու դարդ սըրտում,
Մաշվում էր խեղճը, զոռ տալով խելքին՝
Հե՞ր չարժանացավ հոր գովասանքին . . .

Նորա եղբայրը գերի էր տարած,
Թըշնամու ձեռքով տունը ավերած .
Ճիգ արավ, գլուխը վըտանգի ձըգեց . . .
Ազատեց եղբորն ու տունը կանգնեց . . .

Հանկարծ . . . սար ու ձոր, ծով դըղըրդեցան,
Բյուրք բյուրոց բերնով գոչեց ազգ մարդկան .
«Մեծ Մարդու անուն դու ա՛յժմ ըստացար,
Եղբորդ հիշեցիր ու քեզ մոռացար»: